



Կանոնագրության

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆ

ԵՐ

ԱՌԱՋՆՈՐԴ ՀԱՅԱՌԱԿԱՆԱՑ



ԿՐԱՏԱՐԱԿԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



ԹԻՐ 39




ՏՊԱԳՐԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



ԹԻՐ



ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՀԱՆՐԱԳԻՏ ՀԱՆՐԱԿԻԺԱԿ HANRAKIDAG

ՀԱՐԱԹԱԿՆ խմբագրություն JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIE

Զ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ || ԹԻԻ 39 || 27 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1903



ՏՈՔԹ. ՄԻԿԱՅԷԼ ԷՖ. ԽՕՐԱՍԱՆՃԵԱՆ

ՎՍԵՄԱՓԱՅԼ

ՏՈՔԹ. ՄԻՔԱՅԵԼ ԷՖԵՆՏԻ ԽՕՐԱՍԱՆՃԵԱՆ

Մեր համայնքի պարծանքներէ մէկն ալ կորսնցուցինք անցեալ երկուշաբթի: Տոքթ. Քեաթիպեաններ ու Տոքթ. Խորասանճեաններ այնքան քիչ կ'ունենանք մեր մէջ որ անոնց մահը ամենուն համար կսկծալի ցաւ մը կուտայ:

Տոքթ. Միքայէլ Խորասանճեան՝ հարազատը նշանաւոր Խորասանճեան Պետրոս ամիրայի, Պոլսոյ Բժշկական վարժարանէն վըկայուելէ վերջ՝ 1848ին Բարիզ գնաց ուսումը կատարելագործելու: Դարձին, ուսուցիչ կարգուեցաւ Կայս. Բժշկական վարժարանին եւ այս պաշտօնը վարեց 30 տարի այնքան ձեռնհասութեամբ որ գնահատուեցաւ Վեհ. Սուլթանին կողմէ՝ վարձատրուելով Պալայի աստիճանով, եւ ծերութեան պատճառաւ ուսուցչի պաշտօնէն հըրաժարելէն վերջ՝ Պատուակալ Ուսուցչի տիտղոսով:

Ի՞նչ հարկ խօսիլ իր ազնիւ բնաւորութեան, խորաքննին գիտութեան, զգայուն ու բարի սրտին վրայ, քանի որ մայրաքաղաքիս բնակիչներուն շատերը անձամբ հաստատած են եւ գաւառներու մէջ աւանդութեան պէս բան մը եղած են ատոնք:

Տեղական օտար մամուլը, ի մասնաւորի Թուրք լրագրութիւնը ամէնէն համակրելի տողերը ընծայեցին անոր յիշատակին, ի վեր հանելով անոր սրտի, հոգիի ու իմացականութեան անհուն առաւելութիւններն:

Տոքթ. Խորասանճեան կը թողու երկու մանջ զաւակ՝ Պետրոս Պէյ Խորասանճի եւ Տոքթ. Յովհաննէս Պէյ Խորասանճի. վերջինը՝ որ անպուգական Հօր թեւին տակ ծլած՝ կը խոստանայ Հօրը անունը անմոռաց պահել իր իսկ գործովը. աղջիկներէն մին հարս գացած է Հունգարիա բնակող Յօն Բօնգուլ ասպետի ընտանիքին եւ միւսն ալ Իզմիր Եռսուֆեան ընտանիքին:

Յուզարկաւորութեանը՝ որ տեղի ունեցաւ անցեալ չորեքշաբթի օր, կը նախագահէր Ս. Պատրիարք Հայրն բազմաթիւ եկեղեցականներէ շրջապատեալ: Ներկաներուն մէջ կը տեսնուէին Կայսեր. Բժշկական արժարանի ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ մայրաքաղաքիս բժշկական եւ պետական բարձր դասու անդամներն և խուռն բազմութիւն: Քաղաքապետ Վսեմ. Րըտփան փաշա, և Բերայի կառավարիչ Վսեմ. Համիթ Պէյ հանգուցելոյն բնակարանն զրթալով՝ իրենց ցաւակցութիւններն յայտնեցին վշտահար ընտանիքին:

ՀԱՄԱՌՕՏ ԳՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ

(Շար. 38րդ թիւէն)

ՅՍՏԱԿՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՊԱՅՄԱՌՈՒԹԻՒՆ ՈՃԻ

Սահմանը. — Մթութեան կամ խրթնութեան այլ եւ այլ պատ-
ճառները. — Բռնագրօսիկ կամ պատ ի պատ բացասութիւններ. —
Շրջում (inversion)

Ոճին մթութեան յաճախակի պատճառներէն մին ալ ան է որ
գրողը կ'ուզէ ինքզինք շատ նրբամիտ, շատ փափկանկատ, խո-
րամիտ ու խորախորհուրդ երեւցնել կամ ցուցնել:

Մեծ գրագէտ մը որպէս է Պալլադ այս թերութիւնը գոր-
ծած է երբ իր վէպերէն միոյն դիւցազնը Ալպէրտ Սալվարոսը,
նկարագրած ատեն կ'ըսէ.

« Իր ընթացքը, իր կեցուածքը, ամէն ինչ, մինչեւ իր հա-
« գուտը ունէր չի գիտեմ ինչ բան որ չի բացատրուիր բայց եթէ
« խորհուրդ (mystère) բառով: Դիւցազանը ներս մտաւ Մատաղա-
« տի աղջիկին զմայլեցաւ մարդոց այս սաղապաճեմ եւ գրեթէ
« հանդիսական քալուածքէն, մարդեր որք իրենց ուսերուն վրայ
« կ'կրեն աշխարհի մէջ »:

Պալլադ իր միևնոյն գրական գործին մէջ, աւելի հեռուն
սապէս կ'նկարագրէ դեռատի օրիորդի մը գեղեցկութիւնը.

« Այս փոքրիկ օրիորդը Հալանաի սիկարի մը ոսկեղօծ դոյնն
« ունէր, կրակէ աչքեր, հայուհի արտեանունքներ, հակաբրիտա-
« նական երկայնութեամբ յօնքեր: Մաղեր աւելի քան սեւ, եւ,
« այս գրեթէ ձեթորակ մորթին տակ, ջիղեր եղական ուժով, եւ
« տենդոտ աշխուժով »:

Խնչ ըսել է հայունի կամ արմենունի արեւանունք, հակա-
բրիտանական յօնքեր, եւ մազեր աւելի քան սեւ: Խոշոր բառեր որ-
քան ուռուցիկ նոյնքան եւ անհասկնալի կամ անիրմատ:

Այս օրինակ գրողներու համար (որոց թիւն օր քան զօր դաշ-
տի խոտերուն ու ծովու ձկներուն չափ շատնալու վրայ է եւ մեր
օրեր ու մեր մէջ, հայոցս գեղեցիկ միսքերուն մէջ) շատ ի դէպ
կուգայ կրկնել ու պատշաճեցնել Ֆրանսայի Ակադեմիային առա-
ջին կաճառորդներէն միոյն՝ Մէյնարի սա խօսքը զոր ուղղած է
իր դարուն (Ժիլդ) առաջին կիսուն մէջ, իրեն ժամանակակից
խրթին ու միգամած իմաստով մատենագրող հեղինակի մը:

« Ինչ որ կ'արտադրէ ձեր գրիչը շատ քսքողեալ ու գաղտնա-
« ծածուկ է, ձեր ճառը գիշեր մէ, լուսնկաէ եւ աստղերէ որբեալ-
« ցած գիշեր մը: Բարեկա'մ, մէկդի ըրէ, ձգէ՛ սա մարտիւ-
« պատ հռետորականը: Գուշակ մը պէտք է որ ձեր միջին գըր-
« ուածներուն միտքը մեզ հասկցնէ: Եթէ քու միտքդ կ'ուզէ
« ծածկել իր խորհած գեղեցիկ բաները, ըսէ թէ ո՞վ կ'արգիլէ
« քեզ լռութիւն պահելէ »:

Բռնագրօսիկ բացատրութիւններ եթէ չի փնասեն ոճին յստա-
կութեան, գէթ զայն կ'ընեն ծաղրելի:

Շատ հեռուէն փնտռուած արուեստակեալ ձեւեր կ'փնասեն ո-
ճին որքան պայծառամտութեան նոյնքան անոր չէնքի, չնորհքին:

ԺԹՐԳ. դարու բանաստեղծ մը, Հայր Լըմուէն՝ Սէն Լուիի
(Սուրբ Լուդովիկոսի) դիւցազներգութեանը մէջ, սապէս կ'ըսէ
աչքին մէջ հարուած մ'ընդունած պատերազմիկի մը մասին խո-
սած ատեն:

« Եւ գիշերն յանկարծ անոր վրայ հասաւ լոյսին դռներէն »:

Եւ ուրիշ տեղ մը երբ կը խօսի նկատմամբ այն մարտիկներուն
որոց նայուածքներուն մէջ կատաղութիւնը կ'որոբօքի, կ'ըսէ.

« Իրենց սիրտը կ'ամբաւանայ իրենց աչքերուն մէջ և իրենց
աչքերէն սպառնալիքը կ'թօթափէ »:

Աս դարձուածքներուն մէջ կայ բռնագրօսիկ բան մը որ կը
խեթկէ, եւ կ'փնասէ իսկ ոճին յստակութեան:

Աս օրինակ ձախորդաբանութիւնները պախարակելու համար է
որ Պուալօ իր Քերթողական արուեստ անուն գրքին մէջ կ'ըսէ.

« Շատեր յիմարական զայրութէ մը քշուած, միշտ շիտակ ի-
մաստէն հեռու կ'երթան փնտռել իրենց մտածումները, կարծելով
թէ իրենց հրէշային ոտանաւորներուն մէջ ստորնացած պիտի ըլ-
լային եթէ ուրիշի մը պէս հասարակօրէն մտածած ըլլային:

(Շար.)

ԱՐՄԷՆ

ՆԱԲՈՎԱՄԻՏ ՏՂԱՆ

— Ո՛չ, հայրիկ, կ'ըսէր տղան՝ մէկ ձեռքով հօրը դաստակէն
բռնած և միւսովը քրջնոտ լաթի կտորուանքներու մէջ ծրարուած
տաժանելի աշխատութեան արդիւնքը ակուսներովը քակելով,
երբէ՛ք չեմ հանդուրժեր որ այս քրտնաթոր վաստակա ալ բաղ-
դակից ընէք առջի բերած գրամներուս:

Հայրը, որ հարուստ էր, իր այս միակ ժառանգորդին հոգա-

տարութիւնը փորձել ուզած էր, հասկնալու համար թէ՛ իր մահ-
ուրնէն յետոյ տղան պիտի կարենա՞յ արդեօք չահագործել այն
անհամար ստացուածքը զոր պիտի թողուր, և հրամայած էր որ
իր ճակտին քրտինքովը երկու ոսկիի գումար մը շահի:

Շատ ծանր էր հօր այս յանձնարարութիւնը. աշխատի՛լ,
դրամ վաստկի՛լ, չէր գիտեր թէ ի՞նչ կը նշանակեն ասոնք: Մա-
նաւանդ իր տասներութը գարունները գգուանքի, շոյանքի ու
փայփայանքի վայելումներով անցուցած էր: Մօր այս մէկհատիկ
զաւկին սովորական ժամանցն էր՝ հայրենի տան ճոխութիւնները
վայելել. լաւ հագուստ, համադրամ կերուխում և հաճոյալի զբօ-
սանքներ շփացուցած էին տղուն միտքն ու հոգին: Իսկ հայրը,
հաստատ իր որոշման վրայ, ստիպած էր որ անպատճառ ճակտի
քրտինքովը շահի ու բերէ պահանջուած գումարը:

Մայրը, որու աչքերէն բնաւ չէր վրիպեր տղուն մտածկո-
տութիւնը, հարցուց անոր տխրութեան պատճառը: Տղան բա-
ցատրեց հօր հրամանը: Մայրը ժպտեցաւ, ժպիտ մը որ խրախոյս
կը ներշնչէր. « Հոգ չէ, տղա՛ս, ըսաւ մայրը, ես կուտամ այդ
դրամը որ իբր աշխատութեանդ արդիւնք կը ներկայացնես հօրդ »:

Մեծատունը նստած էր ծովեզերեայ ապարանքին դէպի ծով
երկնցած պատշգամբին վրայ, երբ տղան մօրմէն ստացած երկու
ոսկւոյ ծրարիկը յանձնեց: Հայրը առաւ զայն ու քիչ մը դիտելէ
յետոյ, յանդիմանական շեշտով մը. « Տղա՛ս, ես դրամի կարօ-
տութիւն չունիմ, քու աշխատութեանդ արդիւնքը միայն կ'ուզեմ »
ըսաւ ու ծրարիկը նետեց ծովը:

Թշուառ երիտասարդը դարձաւ ու մօրը պատմեց պատահածը:
Մայրը, որու սիրտը կը մորմոքէր տղուն տխրութիւնը տեսնելով,
յարեց. « Զաւա՛կս, քեզի տուած ոսկիներս հօրդ դրամարկղէն
առած էի, անշուշտ հայրդ ճանչցած ըլլալու է զանոնք. ես հի-
մայ կ'երթամ մեր դրացիէն կ'առնեմ, քանի մը օր յետոյ ներ-
կայացուր զանոնք հօրդ, որ չճանչնալով՝ կ'ընդունի »:

Մայրը ըսածին համեմատ կատարեց. տղան առաւ ոսկիներն
ու յանձնեց հօրը որ նստած էր դարձեալ այն չարաշուք պա-
տըշգամբին վրայ:

Հայրը առաւ ծրարիկը ու առանց վրան նայելու, նետեց
ծով. բարկացայտ աչքերով նայուածք մը ուղղեց տղուն, « Քրե-
տինքովդ եղած՝ աշխատութեանդ արդիւնքը կ'ուզեմ, ըսաւ, ա-
հա այս է պահանջածս »:

Յուսարեկ երիտասարդը, ի՛նչ ընելիքը չէր գիտեր. բայց
որովհետեւ ստիպողականութիւնը կորովամտութեան կը մղէ
մարդը, առանց երկար բարակ մտածելու, վար իջաւ տղան, հի-

նուկ լաթեր հագաւ, մառանէն քիչ մը ուտելիք ծրարեց թուղթի մը մէջ, եւ տունէն դուրս ելաւ:

Անվորձ պատանին, ուր երթար, ի՞նչ ընէր. ո՛չ արհեստ գիտէր ոչ ալ ծանր աշխատութեան տոկալու կարողութիւն: Բայց հօրը յարգելի ու անդրդուելի հրամանը պարտաւորեցուց վերջապէս համակերպիլ նոյն իսկ տաժանելի աշխատութիւններու:

Իր հագուստին կտրտած ու աղտոտած պատառիկներուն մէջ ծրարած ու ծոցը՝ շապիկին վրայ կարած էր այն երկու ոսկին որ որմնադիրներու քով շաղախ շինելով վաստկած էր, և որու վրայէ վայրկեան մը իսկ չէր հեռանար միտքն ու ձեռքը:

Հասաւ վերջապէս հօրը տունը եւ առանց մէկը երթալ բարեւելու, ուղղակի գնաց հօրը քով որ նստած էր նշանաւոր պատշգամբին վրայ: Հայրը, առաջուան պէս, երբ կը պատրաստուէր դրամները ծովը նետել՝ տղան բռնեց թեւէն ու ըսաւ.

— Ձէ՛, հայրիկ, ալ չպիտի ներես...:

Հայրը տղուն այս վիճակը տեսնելով ու դիտելով անոր աղերասրիւ գէմքը՝ յուզուեցաւ. « Հիմա կը հաւատամ թէ, ըսաւ, այս դրամները քու ճակտիդ քրտինքովը վաստկած ես, որովհետեւ կը ճանչնաս անոնց յարգը »:

ՍԱՐԳԻՍ Յ. ՊՕՂԻԿԵԱՆ

ԴԱՇՏԵՐՈՒ ԱՇԽԱՏԱՌՈՐԸ

Աշխատաւորը դաշտերու՝ ունի երկինքն իր գլխին վերեւ, հողը ոտքերուն ներքեւ, օդը՝ իր կուրծքին մէջ, ընդարձակ հորիզոնը՝ իր նայուածքներուն մէջը. չի մտածուած տեսարանը, բայց մշտնջենապէս նոր, երկինքին, երկիրին, ցորեկունան, գիշերուան եղանակներուն, որոնք կը խօսին առանց խօսքերու, բայց առանց տաղտկութեան, կարծիքները, սիրտը, միտքը գեղին մարդուն. անոնք կը հանդուրժեն հազար զանազան աշխատութիւններու խելքի հազարաւոր զանազան դիրքերու մարմինի, հազար գործածութեանց ժամերու եւ բազուկներու: Գրեթէ այս ամէն աշխատութիւնները կը կատարուին օդին մէջ ու ցերեկ տեսն, առողջութիւնը ու զուարթութիւնը մարդուն: Մարդը հոն մեքենայ չէ, մարդս է. ան՝ հոն կը գնէ իր նախանձաւորութիւնը, իր դրամը, իր ճարպիկութիւնը, իր ուժը, իր ճշգրտութիւնը, իր վարպետութիւնը. հոն ժիր ու գործօն է ան, բայց վարձկան չէ՛, ու կը տեղաւորուի յարմար տեղը դաշտային ընդարձակ գործատունին մէջ, որ բա՛ց է իր քայլերուն:

ԹԱՐԳՄ. ՎԱՀՐԱՄ

ԼԱՄԱՐԴԻՆ

ԵՐԵԿՈՆ

Յերեկուան փառահեղ լուսատուն նիրհելով իր փառքին մէջ, յամրաքայլ կը խոնարհի իր յաղթական կառքէն :

Սպիտակափայլ ամպը որ՝ մեր աչքերէն կը ծածկէ զայն՝ ոսկեգոյն ակօսներով կը պահէ անոր հետքը երկինքներու մէջ, ու ծիրանեգոյն լոյսով մը կ'ողողէ տարածութիւնը :

Երկնակապոյտին մէջ ի կախ տուած ոսկեշող կանթեղի մը պէս լուսինը կը տատանի հորիզոնի ամբերում, անոր արծաթեայ ճաճանչները կը նիրհեն մարգին վրայ, ու լեռներու վրայ կը պարզուի գիշերներու առագաստը :

Ասի՛ այն ժամն է ուր բնութիւնը վայրկեան մը ինքնամփոփ, վերահաս գիշերուան ու խուսափուկ ցորեկուան միջեւ, կը բարձրանայ լոյսի ու մութի Արարչին. եւ կարծես կը մատուցանէ Աստուծոյ, պերճ լեզուով մը, արարչագործութեան չքեղ մեծարանքները :

Թարգմ. Կ. ՔէՕԼԷԵԱՆ

ԼԱՄԱՐԳԻԻՆ



ՀԻՒԱՆԴԸ ԵՒ ԲԺԻՇԿԸ

Օր մը հիւանդ մը կուգայ խորհուրդ հարցնել, մեզ ժամանակից նշանաւոր բժիշկներէն միոյն, Տոքթ. Թրուսոյի : Բժիշկը զայն քննելէն ետքը յայտնեց որ հիւանդութիւնը ծանր է և պէտք է անյապաղ վիարութեան ծանր գործողութիւն մը կատարել :

— Բնաւ քաջութիւն պիտի չունենամ, գոչեց յուսահատութեամբ հիւանդը, այդ գործողութեան կատարման խորհուրդն անգամ միտքս բերել կը սոսկամ : Ի՞նչ պիտի ըլլայ վերջը :

— Այդպէս մի՛ ըսէք, պատասխանեց Տոք. Թրուսոյ, այդպիսի վարմունք մը մարդու արժանավայել չէ :

Հիւանդը զայրացած պատասխանեց. — Շատ դիւրին է որ ինչները քաջութեան խրախուսել, երբ մէկը անոր ցաւերէն և ո՛չ մէկ փոքր մաս մը կ'զգայ :

— Կր սխալիք, պարոն, ըսաւ քաղցրութեամբ բժիշկը, կարծելով թէ բնաւ ձեր զգացած ցաւերը չեմ զգար : Երկար տարիներէ ի վեր քաղցիկեղէ կը տառապիմ, որուն հսկայաքայլ աւերումները օրէ օր կ'զգամ, քանի մը օրէն պիտի մեռնիմ : Դուք երեք ամիսէն պիտի առողջանաք, իսկ ես մինչեւ այն ատեն մեռած պիտի ըլլամ :

Հիւանդն այսքան պաղարիւնութենէ ապշած՝ լռեց : Ինչպէս որ Թրուսոյ յայտարարած էր, քիչ ժամանակ վերջը մեռաւ, մինչեւ իր վերջին վայրկեանը առանց թերանալու իր բժշկի պարտականութեանց մէջ, կենդանի օրինակ ըլլալով նոյն իսկ իր հիւանդներուն ցուցնելով անոնց քաջութիւն՝ յանդէպ մահուան եւ բարեսիրութիւն հանդէպ մարդկանց :

ՏԻՎԻՆԻՆ ՍՊԱՍՈՒԼՈՒ

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ ԵՐԵՐ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ

Գ . Ա Ր Ա Ր Ո Ւ Ա Մ

(Շարուն. 38րդ Թիւէն)

Ա . Տ Ե Ս Ա Ր Ա Ն

Արաֆսի (Շուշանիկ). — Շըթ... , ճայն մը չի՞ գար ական-
ջիդ :

Շուշան. — Ոչ :

Արաֆսի. — Վստա՞հ ես թէ մօրաքոյրս չէ արթնցած տակա-
ւին :

Շուշան. — Այո՛ . Խլուրդի մը պէս կը քնանայ և ոնգեղ-
ջիւրի մը պէս կը խռկայ : Մի՛ վախնաք , արդէն ժամը երեքէն
առաջ չարթննար , դեռ բաւական ժամանակ ունինք , հետեւա-
բար կրնանք քիչ մը խօսիլ : Տիկ . Հռիփս . ձեր պատուական մօ-
րաքոյրը , անպատճառ կ'ուզէ սպասուհի մը առնել քովը . հատ
մը առաջարկեցին իրեն և ան ալ ինծի զրկեց երթալու հարցնե-
լու համար : Ես Տիկ . Հռիփս . ի կարծիքէն չըլլալով եւ մանաւանդ
չուզելով ընկեր ըլլալ խլէզի մը հետ որ ինքզինքը բան մը պիտի
կարծէ և ինծի պիտի հրամայէ , միտքս եկաւ որ ես այս սպա-
սուհիին տեղն անցնիմ և ինքզինքս իր անունով ներկայացնեմ , և
ունենալիք վարմունքովս ապացուցանեմ Տիկինին թէ պզտիկ
սպասաւորները բան մը չեն արժեր : Գացի ախտէր Յակոբէն ձեռք
մը հագուստ վարձեցի , գլուխս սանտրեցի , կօշիկներս ներկեցի
եւ գլուխս բարձր ելայ գացի : Շատ հաւնեցաւ կերպարանքիս եւ
սկսաւ ինծի հրամաններ տալ որոնց ամէնն ալ հակառակ կերպով
կատարեցի , պնակները կտրեցի , հիւրերը սրդողցուցի , վերջա-
պէս այնչափ ըրի որ ալ ստիպուեցաւ ինծի ճամբայ դնել . բայց
եկու տես որ , Տիկ . Հռիփս . որուն հաւատացուցի թէ ես իմ մօ-
րաքոռորդիս եմ , կ'սկսի զիս ներկայացնել մօրաքրոջս աղջկան .
այն վայրկեանին ալ ինչ ընելս չգիտցայ . միեւնոյն ատեն
ստիպուեցայ թէ՛ Փառանձեմ ըլլալ եւ թէ Շուշան : Եթէ Տիկ .
Հռիփս . գիտնայ թէ Մարեանէն զոր Փառանձեմ կը կոչէ հիմայ ,

ոչ ուրիշ մէկն է այլ Շուշանն նոյն ինքն, ապահով եմ որ իր բարկութիւնը չտի չպիտի ունենայ:

Արաֆսի. — Ի՞նչպէս պիտի կրնաս զինքը հանդարտեցնել:

Շուշան. — Ի՞նչ մը առաջ հանդիպեցայ Գառնիկին, պարտիզպանին եղբայրը, հարցոցի թէ ո՞ւր կ'երթայ. ան ալ պատասխանեց թէ, կ'երթամ հասկնալու համար թէ իրա՞ն կոտորած են թեւերդ ու ոտքերդ: Շիտակը չափ բարի է: Դուք եւս, եթէ ուզէք ձեզմէ մէկը Շուշանին դերը կատարելով կրնաք ինծի այս փողձանքէն ազատել և ես միշտ Փառանձեմ պիտի մնամ: Ելէկ ուրնէ ի վեր ասոր վրայ կը մտածեմ:

Սար. — Բայց եթէ մօրաքոյրը...

Շուշան. — Հոգեբնիդ թող չըլլայ, քաւական է որ ո եւ է Շուշան մը էքելի. պիտի հարցունէ թէ ես իրա՞ն ձեր մօրաքենորդին եմ. այո՞ մը պիտի ըսէք իրեն, յետոյ պիտի երթաք. ես իսկոյն ետեւնուդ պիտի գամ. ճամարիտ Շուշանը պիտի գայ իմաց տալ թէ պղտիկ Փառանձեմը կծիկը դրեր փախեր է եւ ամէն բան պիտի վերջանայ քահ քահ ինդալով որուն յիշատակը պիտի զուարթացնէ ձեր ձանձրութեան երկար ժամերը: Աղէկ չըլլա՞ք:

Սար. — Ո՛չ, ես կը վախնամ:

Շուշան (Արաֆսիին). — Եւ դո՞ւք, օրիորդ:

Արաֆսի. — Եթէ գիտնայի թէ մօրաքոյրս զիս չպիտի ճանչնայ, իսոք կուտամ որ...

Շուշան. — Ո՛չ չպիտի ճանչնայ. նախ դէմքդ լաւ մը պիտի փաթթես և քալած ատենդ պիտի կաղաս, ինչ որ շատ բնական պիտի երեւի, ինծի պատահած արկածէն վերջ, Օ՛ն, որոշումդ տո՛ւր:

Արաֆսի. — Կ'ընդունիմ. շատ զուարճալի պիտի ըլլայ. (Շուշան դուրս կ'ելլի եւ կուգայ հետք բերելով այն հագուստները որոնք Արաֆսիին պիտի հագցունէ ծպտման համար):

Շուշան (Արաֆսիին). — Օ՛ն, օրիորդ, գոգնոցդ հանէ՛. (կը հանէ եւ ուրիշ մը կը հագցունէ) Ի՞նչ աղւոր վայլեց. հիմա այս գլխարկը... Ի՞նչ սիրուն եղաք... բայց ձայն կայ, ձայն կայ, փախինք. թուալէթիդ մնացորդը իմ սենեակս կ'երթանք կ'ընենք ալ: (Սաքեցիկին) Դուք կեցէք, օրիորդ, մօրաքոյրը եթէ մէկը չի տեսնէ հոս, կրնայ ըլլալ որ կասկածի: (Արաֆսիին) Եկէք, երթանք:

Բ. ՏԵՍԱՐԱՆ

Սար. (Առանձին). — Իրաւ որ, եթէ Շուշանը ճարպիկ է այս տեսակ գաղափարներու մէջ, քոյրս Արաքսին ալ մեծ քաջութիւն

ունի. համարձակիլ այսպէս երեւիլ մօրաքոյրիս առջեւ որուն ամէն ժամը մէկ չէ, իրաւ որ իմ ընելու գործս չէ, եթէ ճանչնայ զինքը, Աստուած իմ... վերջը ի՞նչ պիտի ըլլայ արդեօք:

Գ. ՏԵՍԱՐԱՆ

ՍԱԹ., ՏԻԿ. ՀՌԻՓՍԻՄԷ

Տիկ. Հո. — Ո՞վ կայ հոս այս ատեն. դ՞ո՞ւն ես Սաթենիկ. ինչո՞ւ ասանկ կանուխ ելեր ես այս առտու:

Սաթ. — Որովհետեւ...

Տիկ. Հո. — Որովհետեւ, ի՞նչ... այս ատեն դեռ պառկած կ'ըլլայիր դուն ուրիշ օրեր: Բո՞յրդ ուր է: Փառանձեմը ուր է, ա՞ն է այս աղմուկները հանողը. բայց պէտք է որ դէմքը տեսնեմ. կեցիր, ո՞ւր է Գառնիկը:

Սաթ. — Ձեմ գիտեր, մօրաքոյր:

Տիկ. Հո. — Ձեա գիտեր հէ՛, ինչո՞ւ ուրեմն կանուխ ելած ես:

Սաթ. — Ներեցէք, մօրաքոյր, կարծեմ Գառնիկը ղրկած տեղերնիդ գնաց:

Տիկ. Հո. — Տեսա՞ր երթալը:

Սաթ. — Ո՛չ, մօրաքոյր:

Տիկ. Հո. — Ուրեմն ինչէ՞ն գիտես թէ գնաց:

Սաթ. — Որովհետեւ... վասնզի...

Տիկ. Հո. — Որովհետեւ... վասնզի, վե՞րջը:

Սաթ. — Ոչինչ, մօրաքոյր:

Տիկ. Հո. — Ոչինչ ի՞նչ ըսել է, Ո՞ւր է Արաքսին:

Սաթ. — Ձեմ գիտեր մօրաքոյր:

Տիկ. Հո. — Միշտ բան չես գիտեր: Ես կ'երթամ կը հարցընեմ (Դուրս ելլելու պահուն Ասրիկե կուգայ):

Դ. ՏԵՍԱՐԱՆ

ՆՈՅՆԻ ԵՒ ԱՏՐԻՆԷ

ԱՏՐ. — Տիկի՛ն, Սամաթիա գացի...

Տիկ. Հո. — Ինչո՞ւս պէտք, ուր կ'ուզես հոն գնայ:

ԱՏՐ. — Ինչպէ՞ս, ինչուդ պէ՞տք... Սամաթիա կայարանին դէմը խույուսմէի Ահարոն աղային տունը գացի, սպասուհիին գըտնուած տունը:

Տիկ. Հո. — Է՛, ըսէ՛, ըսէ՛ :

Ասր. — Ձեզմէ մէկն ալ չէ գացեր հոն հարցունելու համար :

Տիկ. Հո. — Ի՞նչ կ'ըսես :

Սար. (Կամաց մը) . — Ամէն բան հիմա երեւան ելաւ :

Ասր. — Բաց աստի , ապահով եղէք որ Շուշան ոտքը իսկ այն տունը չէ կոխած :

Տիկ. Հո. — Ինչպէ՛ս , Շուշանը . . . բայց շատ տարօրինակ բան է աս . ուրեմն այս պզտիկ սպասուհին որ ներկայացաւ ինձի . . .

Ասր. — Ուրիշ մէկն է Տիկին , բաղդախնդիր մը ըլլալու է :

Տիկ. Հո. — Բայց սոսկալի բան է աս : Բայց դուք , օրիորդ Ատրինէ , ինչո՞ւ առաջարկեցիք ինձի ատ : Գոնէ գիտնայի թէ Շուշանս ինչ եղաւ . . .

Ե. ՏԵՍԱՐԱՆ

ՆՈՅՆԻ ԵՒ ԳԱՌՆԻԿ

Գառնիկ. — Տիկին , ահաւասիկ Շուշանը կը բերեմ ձեզի :

Տիկ. Հո. — Փառք քեզ , Տէ՛ր :

Գառնիկ. — Ա՛հ , խեղճ Շուշանը , որչա՛փ կաղ մնացեր է :

Տիկ. Հո. — Հոգ չէ , հոգ չէ , բժիշկ կանչել պիտի տամ , ներս բեր , ներս բեր :


Գառնիկ. — Մտէք , Շուշան : (Արաքսի ներս կուգայ , Շուշանին Ա . արարուածիկ հագուստները հագած , գոգնոց ելն . . դիմքը լաւ մը փաթկած , Շուշան ետեւէն կուգայ) :

(Մնացեալը յաջորդ անգամ)

ՆԱԽԹԻ ՀՈՐԵՐ

Քանի՛ բրիչի հարուածները խորը կ'իջնեն՝ երեւան կ'ելլեն զանազան հողի շերտեր : Արդէն Պաքուի հողը աւազային է , աւազը փորելով՝ հետզհետէ խոնաւ և անմածուցիկ ցեխ կ'ելլէ , որուն կը հետեւի խոնաւ կաւ , կապոյտ կաւ , տեսակ մը սպիտակ կաւ , որուն լինմաւ անունը կուտան . աղի ջուրի շերտեր , նորէն ջրախառն կաւ , եւ յետոյ կ'սկսի ցաւքի աւազը , որ տեսակ մը մութ կանաչ գոյն ունի , սակայն նոր հանուած ժամանակ բոլորովին մածուցիկ է եւ նաւթի հոտ կը բուրէ : Իսկ բուն նաւթի հոտը՝ եթերի եւ իւղային բաղադրութիւններու հոտի կը նմանի :

Նաւթի աւազի շերտը՝ առհասարակ 60-80 և կամ 120 մէթրէն ո՛չ վեր եւ ո՛չ վար կը պատահի, թէեւ կան տեղեր, ուր 6 մէթր խորութենէն նաւթի աւազ կ'ելէ, և յետոյ քուն զօրութեամբ



երբ երկրաչափները պեղիչով հորեր կը բանան, միմիայն բաղդի խնդիր է է բեռնովի պարկի մը հանդիպիլը կամ աշխատութեան պարապը երթալը:

Նաւթը շատրուանաձեւ դուրս կը թայթքէ անսպասելի քանակի իր հետ բերելով աշխատաւորին հարստութիւնը:

Հողերուն կազմութեան համեմատ հնարուած են զանազան տեսակ գծրձիւներ, որոնց ամէնքն ալ նշաձեռն սրածայր են: Փորիչը՝ սրածայր տփաձեւ գործիք մըն է, որ թէ՛ կը փորէ և

Թէ՛ իր մէջ կը հաւաքէ հողի կոշտերը՝ Ժողովող գործին՝ իր մէջ կը հաւաքէ լոյծ եւ փափուկ ցեխերը կամ աւազները, իսկ տապարը՝ կը կտորտէ քարերը։

Գործաւորներու պետը, միշտ քննելով գործիներու դուրս հանած հողը, անմիջապէս կ'իմանայ թէ՛ ի՞նչ տեսակ հող է հետեւեալ շերտը, եւ անոր համեմատ կը փոխէ գործիները։

Այս բոլոր գործիները կախուած են հողին մէջ դրուած խողովակին մէջ երկաթեայ ձողերով, որոնք իրարու հետ կը միանան պտուտակներով, երբ գործիքը կը ծակէ քարիւղի երակը, կազը. որ առհասարակ հաւաքուած կ'ըլլայ ժայռին ներքեւ, դուրս ելլելու տեղ կը փնտռէ, եւ կատաղի մռնչիւնով դուրս կը ցայտէ, ու ասկէ յառաջ կուգայ քարիւղի շատրուանը, որու ցայտումը երբեմն մինչեւ մէկ սմիս կը տեսէ։

Վերոյիշեալ բացատրութիւնը՝ մեր պատկերին մէջ շատ յետադիմ կերպով կը տեսնուի։ Աջ կողմի երկու հորերը քարիւղը կը ցայտեցնեն, իսկ ձախակողմինը առանց հանդիպելու նաւթի երակի մը, աշխատութիւնը պարապ գացած է։

Կազի սոյն զօրութիւնը՝ շատ զօրաւոր է։ Ստորերկրեայ հաւաքուած այս կազը, երբեմն երկրաշարժեր յառաջ բերած է, ինչպէս մէկ քանի տարի առաջ կործանեց Շամախի քաղաքն, (թէեւ սոյն տեսութիւնը շատ երկրաբաններ չեն ընդունիր)։ Երբեմն դուրս կը նետէ երկրի խորերէն այնպիսի քարեր, որոնք բաւական խոշոր են, եւ կազը անոր զանազան պտոյտներ ընել տալով՝ խողովակը լայնցընելով դուրս կը նետէ, իսկ երբ կը դադրի կազի ոյժը եւ ճնշումը, այն ժամ նա կը նուազի քարիւղի արտահոսումը, ուստի մասնաւոր գործի մը կը զրկեն խորը, որ կը գրգռէ կազի աղբիւրը։ Շատ անգամ կը պատահի որ, այդ գրգռելու ժամանակ, յանկարծ կազը դուրս կը մղուի ու օդը կը հանէ գործիները, չուանները. այս տեսակ պատահարի համար, հնարած են միջոցներ, որոնցմով իմանալով քարիւղի հեռաւորութեան չափն ու որոշեալ ժամանակը, կ'շտապեն գործիները դուրս հանել խորէն։

1886էն յետոյ, հսկայաքայլ յառաջդիմութիւններ ըրած է քարիւղի վաճառակութիւնը, այնպէս որ, 1894ին, 5 միլիոն թոնոյ քարիւղի արտադրութիւնն 1900ին բարձրացաւ 9½ միլիոն թոնոյի, սոյն տարւոյն վերջերը՝ Պաքուի մէջ կը գտնուէր 1321 նաւթահորեր, մինչդեռ կային 1495 նաւթահորեր զորս ծակելու գործողութիւնք յառաջ կը տարուէին։ 1901ին, 468 նաւթահորեր ալ սկսան նաւթ ցայտել եւ 434ին պեղումներն աւարտեցան։

Նշանաւոր քարիւղի Հայ հանքատէրեր կան Պաքուի մէջ, և ամէնէն նշանաւորն է Մանթաշեանք. որոնց քարիւղի սնտուկներն հազարներով կը տեսնուի Թուրքիոյ մէջ: Շատեր ալ իրենց նաւթահորերն վաճառած են Անգլիացւոց և գործէ քաշուած: Երանի՜ թէ՛ ամէն Պաքուի հայ, ունենար Շուէտցի Նօպէլ եղբարց



Հորեր կան, որոնք եթէ ազատ ձգուին, ահագին բարձրութեամբ ջվեր կը ժայթքեն, և վար Խափած ատեննին օդին մէջ ցրցկնուելով արեւուն ճառագայթներու տակ հիւանալի տեսարան մը կը ներկայացնեն: Այս ցայտոյ հորերէն մէկ հատը կը բաւէ միլիոններ վաստկցնելու:

գոնէ կիսուն չափ արթնութիւն, և չի թողուն՝ այն ինքնաբոլոր անգին ու անսպառ հարստութիւնն օտարներուն :

Պաքուի մէջ վերջին ժամանակներս չարագուշակներ ելան, որոնք լուր հանեցին թէ՝ քարիւղի հոսումները սպառելու մօտ են : Այս յիմար և անոտի գուշակութիւններուն վերջ տալու համար, ռուսական կառավարութիւնը իր երկրաչափներուն յանձնեց մանրամասն քննութիւն մը կատարել երկրին հանքերուն վրայ : Երկրաբաններն հաստատեցին թէ՝ կովկասեան երկրին մէջ այն մասը, ուր կը գտնուին քարիւղի հանքեր, 3000 քիլոմէթր քառակուսի մակերես մը ունի, և իր տարածութեամբ երեք կամ չորս անգամ աւելի մեծ է քան Ամերիկայի և Բէնսիլվանիոյ հանքերն : — Կասպից ծովուն եզրերն կը ներկայացնեն քարիւղի հարուստ շտեմարաններ, և մարդ հիացմամբ կը տեսնէ նոյն իսկ Պաքուի դէմ Զէլէպեան կղզիներն, որոնց համար կ'ըսուի թէ՝ կազմուած են քարացած ու խտացած քարիւղէ :

Այժմ մեր ընթերցողներուն հոմաուօտակի նկարագրենք թէ՝ ինչպէ՞ս երկրէս կը հանեն ու կը գտնեն քարիւղը :

Նախ բրիչով լայն փոս մը կը փորեն 4-6 մէթր խորութեամբ, կեդրոնը կը բանան 26-70 հարիւրամէթր տրամագիծով, և 2 մէթր խորութեամբ ծակ մը՝ ուր կը հաստատուի երկաթեայ խողովակ մը, որու մէկ ծայրը պտուտակի ձեւով շինուած է : Յետոյ ծանրաքաշ մեքենայի մը միջոցով կը կախեն անոր մէջ բրիչը, որ կը փորէ 3-4 մէթր, և խողովակը հեռզհեռէ վար կ'իջնէ, որուն ծայրը կը հաստատեն իսկոյն պտուտակաւոր ուրիշ խողովակ մը, այսպէս փոփոխակի բրիչ, շիշ... յնիշ եւ հաւաքող դործիներ երկարելով խողովակին մէջ՝ շարունակ կը փորեն և խողովակները մէկգմէկու կցելով՝ մղիչ մեքենայով կը մղեն դէպի երկրիս խորը :

Քիչ ժամանակ յետոյ, Թիֆլիզցի նշանաւոր հարուստ հայ Միրզոէվ՝ լսելով քարիւղի դիտը, առաջին անգամ ձեռնարկեց արտէզեան հորեր բանալ՝ Ամերիկեան դրութեան համեմատ եւ բաւական ալ յաջողեցաւ, Այն տեղն, ուր սկիզբները կը բղխէր քարիւղը, 4000 մէթր քառակուսի տարածութիւն ունէր, և երեսուն տարի առաջ ուղեցին վաճառել Միրզոէվի 1000 ռուբլի արժէքով (12,000 զրչ) բայց վախնալով չէ գնած այն երկիրն, որուն այժմ 7 մէթր քառակուսին՝ կ'արժէ 1000 ռուբլի :

Շատ Հայեր հետեւեցան Միրզոէվի՝ երբ անոր յաջողութիւնը տեսան, բայց միշտ անկատար ու թերի կազմակերպութիւնով : Մէջերնուն և ոչ մէկը նախաձեռնութիւն ունեցաւ ուսումնասիրել Ամերիկեան կազմ արտադրութեան վէթուղներն և բերել տալ

պէտք եղած մեքենաներն ու գործիքներն, նոյնպէս բոլորովին անհոգ գտնուեցան գոնէ՝ մի քանի վարպետներ զրկել Ամերիկա և արուեստին կասարեւագործութեան տեղեակ ըլլալ, այլ շարունակեցին իրենց նախկին դրութիւնն, կարծելով թէ՛ յաւիտեան այնպէս պիտի տեւէր:

Բայց երբ Պաքուի քարիւղի առատութիւնն հետզհետէ երեւան ելլելով ընդհանուր աշխարհի ուշադրութեան առարկայ եղաւ, հետզհետէ եկան Եւրոպացիք, մանաւանդ Շուէտցի Նոպէլ եղբարք գործը քննեցին, և հասկցան թէ՛ գիտական ու արուեստական նոր մէթոտներով զարգանալու մեծ յարմարութիւն ունի, մեծ և կարեւոր դրամագլուխներ բերին, և նոր մեքենաներով գործարաններ հաստատեցին և հայոց արտադրած քարիւղէն շատ աւելի աղէկ քարիւղ արտադրել սկսան: Հակառակ բազմաթիւ խոչընդոտներու, Նոպէլ եղբարք յաջողեցան կազմել մեծաքանակ հարստութիւն մը. մեծամեծ ծառայութիւններ մատուցանելով Եւրոպայի, մէկ կողմէն շահագործման մէջ դնելով Պաքուի հրաշակաւոր քարիւղի հանքերն: 1886 տարւոյն վերջերն, Նոպէլ եղբարց դրամագլուխը կը բաղկանար 40 միլիոն ֆրանքէ:

Նոյն տարւոյն մէջ, Պալաքանիի մէջ բացուած ջրհորներն 150 էին, որոնք ամէնքն ի միասին 10 միլիոն լիտր քարիւղ կ'արտադրէին: Այդ ջրհորներն իրենց բացումէն ի վեր տուած են 3000 միլիոն լիտր այրելի իւղ. որ կէս դար Փրանսայի համար կրնայ բաւել:

Նոպէլ եղբարց նման Սեւ քաղաքին մէջ ամէնէն մեծ գործարանին տէրն է Ռոշիլտի Անգլիական սէնտիքան, որ ընդարձակ գործ կ'ընէ քարիւղի վրայ՝ բովանդակ երկրագնդիս մէջ, Անգլ. Ընկերութիւն մը, 6 միլիոն ագլ. ոսկի դրամագլխով՝ գնած է մեծահարուստ հայ նաւթատէրերու հորերը:

(Շարունակելի)

ՔԱՂՅՐՈՒԹԵԱՆ ՈՒԺԸ

Զմրան օր մըն է. ոստիկան մը Նինո անուն տղայ մը բերաւ դպրոց. ոստիկանը դասարանէն ներս մտնելուն պէս տղան առաջին գրասեղանին վրայ նստեցուց ու դառնալով ինծի սա խօսքերը ուղղեց. « Տիկին, տասներկու անգամ ձեռքէս փախաւ այս անպիտանը, մինչեւ որ կարողացայ օձիքը ձեռք անցնել. դաւտարբին լուջեւ պիտի տանէի, բայց խոստացաւ դպրոց գալ. շատ

խոշոր ալ չէ. բայց, տիկի՛ն, բան մը ըսե՞մ, ինծի, եթէ՛ ձեր տեղը, ամսական 200 տոլար ալ տան այս ստահակին հետ չեմ ուզեր դործ ունենալ:

Ու կտրի՛ն ոստիկանը գլուխը ցնցելով դուրս ելաւ սրահէն:

Նորեկ տղան ստուգիւ խոշոր չէր. իր պտըլիկ մարմնին վերեւ կը ցցուէր այնպիսի ծեր զառամածի դէմք մը, զոր կեանքիս մէջ տեսած չէի երբեք: Հարցումներուս պատասխանելով ըսաւ թէ՛ տասնըմէկ տարու էր, թէ՛ այս ինչ թաղը կը բնակէր. կարդալ քիչ մը գիտէր, գրել բնա՛ւ, թէ՛ չէր ուզած ո՛ր եւ է դպրոցի մէջ մնալ եւ ուսուցիչներուն եւ վարժուհիներուն քթին աղէկ խընդացած էր:

Դասարանին տղոց ամէնէն մեծերէն երկու հոգի կանչեցի ու խնդրեցի անոնցմէ որ Նինոն տանին պէտք եղած կերպով լուան, որովհետեւ փողոցի էն գարշելի ցեխերով ծածկուած էր ան: Բնականաբար Նինո դիմադրեց կատաղութեամբ: Բայց այդ երկու մեծ տղաք այս կարգի գործերու մէջ փորձառութիւն ունէին. հակառակ իր դիմադրութեան, տարին զայն, եւ քսան վայրկեան յետոյ Նինոյի հետ դարձան որ մաքրութեան մէջ կը ծփար հիմա:

Յաջորդ երկու օրերը Նինո դպրոց եկաւ, բայց բոլորովին մերժեց ուսման պարապիլ: Իրեն ազդարարուեցաւ որ եթէ՛ այսպէս շարունակէր ճաշէ ու զրօսանքէ պիտի զրկուէր: Նինո խօլ կատաղութեամբ մը դուրս ելաւ՝ յայտարարելով թէ՛ յաջորդ օրը դըպրոցէն պիտի փախէր:

Յաջորդ օրը, Նինո վարժարան չեկաւ, բայց վաղայաջորդ օրը հօրը գրած մէկ քարթ-բօսթալիս վրայ, հայրը տղան առաւ դըպրոց եկաւ, տախտակամածին վրայ ձգելով՝ վերջին աստիճան բըրտութեամբ սկսաւ ոտքով ծեծել գայն: Եւ երբ հօրը յանդիմանութիւններ կ'ուղղէի իր ըրածին վրայ, պատասխանեց ինծի. « Տիկի՛ն, ներողութիւն կը խնդրեմ, բայց չէ՛ք գիտեր թէ ի՞նչ սոսկալի սրիկայ մըն է, եւ եթէ՛ գայն սպաննէք, կ'երդնում որ բան չպիտի ըսեմ: » Վերջապէս հայրը հաւանեցաւ տղան իմ հոգածութեանս թողուլ եւ ելաւ գնաց:

Նինո տասը վայրկեանի չափ լուռ մնաց: Սպասեցի որ աչքերը գգրոցիս կողմը դարձնէ ու բոլորովին հանդարտ չեչտով մը ըսի տնոր. « Նինո, սա մատիտը կը կտրե՞ս »: Առաւ գայն եւ կտրեց: Յաջորդաբար տասներկուքի չափ մատիտ տուի, եւ ամէնն ալ սիրայօժար կտրեց: Այդ օրը շատ հանդարտ մնաց, աշխատեցաւ, եւ իրիկուան ինէ խնդրեց որ տախտակը սրբէ: Յաջորդ շաբթուն ամբողջ՝ Նինո ամէնէն կանուխ եկաւ դպրոց: Բայց բը-

նականը անգամ մըն ալ իր յաղթանակը տարաւ: Նինո նորէն անխորհուրդ դարձաւ եւ հայրը նորոգեց իր վայրենութիւնները, բայց երեք երկար շաբաթներ քաղցրութիւնը կրկնապատկեցի տմենայն ճշդութեամբ ու յարատեւութեամբ:

Նինոն ուղղուած կը նկատէի ալ, երբ փետրուարի առաւուրը դպրոցէն բացակայ գտնուեցաւ, բայց կէսօրէն յետոյ ինքնիրենը դպրոց գալով ըսաւ. « Վարժուհի, այս առաւուր դպրոց չեկայ, բայց կը ցաւիմ չգալուս վրայ »: Սիրտս յուզումէ ու բերկրութենէ բաբախեց:

Այդ օրէն սկսած Նինո սկսաւ իրապէս հետաքրքրիլ ուսման: Արագ յառաջդիմութիւններ կատարեց և օր մը բոլորովին հպարտ շեշտով մը ըսաւ ինծի. « Թուաբանութեան մէջ կարգիս ամէնէն զօրաւորն եմ »:

Տարիներ անցաւ: Արձակուրդները Նինոն չի ջլատեցին երբէ՛ք: Վերամուտին առաջինն եղաւ զիս ողջունողը ըսելով. « Վարժուհի, շատ գոհ եմ որ դպրոց կը դառնամ վերստին »: Օրին մէկը երբ իր դարակին ետեւէն կ'անցնէի, ըսաւ ինծի. « Վարժուհի, իրա՛ւ մեզի պէս անպիտանները կը սիրէք: — Այո՛, Նինո, երբ խելօք էք ես երջանիկ կ'ըլլամ, երբ դուք չար ըլլաք՝ կը տխրիմ, բայց և այնպէս միշտ կը սիրեմ ձեզ »: Վայրկեան մը դիտեց զիս այնպիսի նայուածքով մը, ուր թէ հիացում թէ՛ արհամարհանք կային. « Շատ զարմանալի ու ծիծաղաշարժ բան, ըսաւ Նինո, եթէ ես ձեր տեղը ըլլայի՝ այդպիսի սրիկաներ երբէ՛ք չպիտի սիրէի »:

Հասաւ այն օրը երբ Նինո ուրիշ մէկ քանի աշակերտներուս հետ յաջող ու զօրաւոր ըլլալով ուսման մէջ՝ հանրային վարժարան մտնելու յաջողեցաւ: Տղաքը կարգով շարուած էին, պատրաստ իրենց դպրոցը մեկնելու. հրաժեշտի քանի մը խօսքեր ուղղելէ յետոյ խրատներ տուի անոնց: Յանկարծ Նինո կարգէն դուրս ելլելով խենդի մը պէս վրաս վազեց, սկսաւ գոգնոցս համբուրել հեծկլտալով ու ըսաւ. « Ձեմ ուզեր ուրիշ դպրոց երթալ, չեմ ուզեր հոսկից բաժնուիլ »:

ԳԻՏԱԿԱՆ ԶԲՈՍԱՆՔ

ՊԱՐՈՂ ՀԱԻԿԻԹԸ

Առէք խաչած հաւկիթ մը եւ դրէք զայն խիստ ողորկ ափսէի (թէփսի) կռնակին վրայ . յետոյ ափսէին բոլորածեւ հորիզոնական շարժում մը տուէք եւ հետզհետէ շարժումը շուտցուցէք : Հաւկիթը ափսէին մէջ հանդարտ կեցած էր , այս շարժումով կը զարթնուէր եւ կ'սկսէր իր առանցքին վրայ դառնալ եւ պտուտակի կերպարանն առնել :

Հաւկիթով ընելիք ամէն հաւասարակշռական փորձերու մէջ յաջողութիւնը անվրէպ ըրած կ'ըլլաք , եթէ առաջուրնէ հաւկիթը խաչելու ատեն զանի կանգուն դիրքի մէջ պահէք սանին մէջ : Հաւկիթին մէջգոյացած օդին ջնջին պարապութիւնը մեծաւ անցքին հետ համաչափ կ'ըլլայ եւ հաւասարակշռութիւնը այն ժամանակ կը դիւրանայ :

Սոյն խաղը կատարելու համար բաւական գօրութիւն եւ ճարպիկութիւն կը պահանջէ . իսկ անոնց՝ որոնք կը փափաքին անմիջապէս յաջողիլ , հետեւեալ պարզ եւ դիւրաւ կատարելի կերպը կը ցուցնենք :

Ափսէն սեղանի վրայ դրէք՝ այնպէս որ եզրերը մի քիչ դուրս ելած ըլլան սեղանէն , և ի պահանջել հարկին կարենաք իսկոյն ձեռքով բռնել ափսէն : Հաւկիթը դրէք մէջտեղը և ձախ ձեռքի բթամատն և աջին ցուցամատն հաւկիթին երկու ծայրերուն վրայ դնելով ուժգին թաւալում մը տուէք անոր : Հաւկիթը յանկարծ իր ծայրին վրայ պիտի կայնի ու պարէ . ափսէն ուժով մը բռնեցէք և միայն հաւկիթին թաւալման շարժումը կանոնաւորել կը մնայ . դաշնակի վրայ զարնուած պարերգ մը շատ աւելի ախորժելի պիտի դարձնէ այս խաղը :

ՄՏԱՄԱՐ ԶԱՅԻՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

1. — Շնչաւորե՞մ 'առաջ կուգամ
Սաղայն երբեք չունիմ ես կեանք ,
Ես քեւել չեմ մոգ կամ գուեսկ
Ամէն ումեք պատասխան տամ :

2. — Եթե հանգիստ զիս բող սան
Մարդոց եմ ես միշտ պիտանի.
Ձեռք է փոքր վեղարի նման
Կանգուն կենամ առանց ոտի :
Հանդերձս ըսես, զուտ կապոյս է,
Մարմինս ըսես, սպիտակ է.
Տղայոց եմ յոյժ սիրելի,
Զորհոսանեաց եմ ասելի :

ՄԱՄԼՈՅ ՏԱԿ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԱՐԵՅՈՅՑ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆԻ

ՏԱՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Ամէնէն ժողովրդական, Ամէնէն Զուարճալի

Ե Ի

ԱՄԷՆԷՆ ՇԱՏ ԾԱԽՈՒԱԾ ԲՆԴԱՐՁԱԿ ՕՐԱՅՈՅՑԸ

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ Խմբագրութեան, Բաժանորդագրութեան եւ
ո՛ր եւ է գործառնութեան առթիւ հարկ եղած դիմում, գրութիւն
կամ նամակ պէտք է ուղղուին միմիայն

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆԻ

որ միակ վարիչն ու պատասխանատուն է թերթին :

ԿԱՐԵՒՈՐ ԶԵԿՈՅՑ

Հանրագիտակի Մեծ. Բաժանորդներէ և Գործակալներէ կը
խնդրենք որ բաժանորդագիտներէ և յանձնարարութիւններէ մը-
նացած պարտքերնին վճարել բարեհաճին այլևս, որովհետեւ
տարւոյն ինն ամիսը լրանալէն վերջը՝ դեռ չատ տեղեր սոյնօրի-
նակ հաշիւներ անվճար կը մնան :

ԽՄՐԱԳՐԱՊԵՏ-ԱՐՏՕՆԱՏԷՐ
ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐԻԶ-ՀՐԱՏԱՐԱԿԻԶ
ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆԻ

Կ. Պոլիս, Պապը Ալի հատտէսի, Թիւ 38

1874

1874

1874

1874

1874

1874

1874

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՇԱՔԱԹԱԿԱՆ

Նոր տարիէն սկսեալ Հանրագիտակ կը հրատարակուի շաբաթական 20-24 էջէ բաղկացեալ, եւ ամէն ամսոյ մէջ մէկ թիւը պիտի յատկացուի Առաջնորդ վանառականացի, 24 էջ:

Վեցամսեայ ու եռամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր:

Տ Ա Ր Ե Կ Ա Ն Գ Ի Ն Ն Է

Պոլսոյ համար

30 ղրուշ

Գաւառաց »

35 »

Արտասահման

45 »

Հատը

30 փարայ

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ ԳՈՐԾԱԿԱԼՔ

Ամասիա, Հայկազուն էֆ. Խանդամուր
Ասաբազար, Աշոտ էֆ. Պազ Վաղեան
Ասանա, Յակոբ էֆ. Տ. Պօղոսեան
Գօնեա, Տիգրան էֆ. Յ. Տիւլէրեան
Եւթոկիա, Խաչիկ էֆ. Գ. Թաշճեան
Երզնկա, Պարոյր էֆ. Արզուման
Զմիւռնիա, Կարապետ էֆ. Մալէճանեան
Էրզրում, Տիգրան էֆ. Բրուտեան
Էրպա՛ա, Կարապետ էֆ. Գօճանեան
Թեֆրսաղ, Ասատուր էֆ. Արսէնեան
Խարբերդ, Կ. էֆ. Մ. Յովսէփեան
Կեսարիա, Երուանդ էֆ. Երկաթեան
Կիւրիկ, Գրիգոր Մ. էֆ. Խանդամուր
Հալեպ, Ս. էֆ. Ամատեան
Հիւսէյնիկ, Կ. էֆ. Մ. Յովսէփեան
Մալաթիա, Գրիգոր էֆ. Թաշճեան
Մարաշ, Արժ. Տ. Նէրսէս Քհ. Շահինեան
Մարզուան, Ա. էֆ. Կ. Կիւլպէնկեան
Միացեալ-Նահանգներ, Մ. Մ. Բարակափուրեան և Ընկ.
Նիկոմիդիա, Յակոբ էֆ. Տ. Ազարեան
Պարսիզակ, Ստեփան էֆ. Մակարեան
Սամսոն, Յովհաննէս էֆ. Նիքսարեան
Սրվազ, Մանուկ էֆ. Պէլլէրեան
Սիմ հանի ֆեոյ Ա. էֆ. Կ. Կիւլպէնկեան
Վեզիր ֆեօրիս » » »
Տիւրքիի, Լևոն էֆ. Սրապեան
Օրսու, Յովհաննէս էֆ. Հէքիմեան

Քանի մը տեղերէ, ուր Գործակալ չունինք, կը հարցնեն թէ Հանրագիտակի բաժնեգիրն և կամ մանր յանձնարարութիւններու փոխարժէքը ի՞նչպէս ղրկելու է:

— Ամէնէն պարզ միջոցն է Օսմ. Նամակադրոշմ դնել Նամակին մէջ եւ Նամակն ալ ապահովագրել (քանիւս ընել): Նամակադրոշմ կրող Նամակները ապահովագրելը անհրաժեշտ է, որովհետեւ մեր ձեռքը Հասած ժամանակ, երբէք պատասխանատու չգոյք: